# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն. Զառիթափ, (0282) 91507, zaritap.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

22 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 19

## ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019Թ.-Ի ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով.

ավագանին որոշում է

Հաստատել Զառիթափ համայնքի ավագանու 2019թ-ի փետրվարի 22-ի թիվ 2 նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի ավագանու 2019թ. փետրվարի 22-ի թիվ 2 նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի Սարավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

4. Զառիթափ համայնքի Զառիթափ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող հողատեսքը աճուրդով վաճառքի ներկայացնելու մասին:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Ասլանյան Սմբատ
2. Բաբայան Արգիշտի
3. Գևորգյան Գևորգ
4. Գրիգորյան Գարիկ
5. Սաղաթելյան Վիրաբ
6. Վարդանյան Սասուն

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն. Զառիթափ, (0282) 91507, zaritap.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 20

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌԻԹԱՓ ԵՎ ՍԱՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով.

ավագանին որոշում է՝

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց Ձոր մարզի Զառիթափ համայնքի Սարավան բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում նախատեսված փոփոխությանը՝ ըստ որի նախատեսվում է բնակավայրի վարչական տարածքում գտնվող ծածկագիր՝ 10-039-0306-0015 2,117 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը, ծածկագիր՝ 10-039-0304-0035 3,569 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը և ծածկագիր՝ 10-039-0304-0033 5,835 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ էներգետիկայի հողերի գործառնական նշանակության:

2. Զառիթափ համայնքի Զառիթափ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում նախատեսված փոփոխությանը՝ ըստ որի նախատեսվում է ծածկագիր՝ 10-022-0291-0018 0,10518 հա արոտավայրը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման:

3. Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործարքը:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Ասլանյան Սմբատ
2. Բաբայան Արգիշտի
3. Գևորգյան Գևորգ
4. Գրիգորյան Գարիկ
5. Սաղաթելյան Վիրաբ
6. Վարդանյան Սասուն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն. Զառիթափ, (0282) 91507, zaritap.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 21-Ն

### ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերի պահանջներով և Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետով և 37-րդ հոդվածի 1-ին կետով.

ավագանին որոշում է

1. Ուժը կորցրած ճանաչել Զառիթափ համայնքի ավագանու 31.01.2019թ.-ի թիվ 4 որոշման համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ 2-րդ կետը:
2. Հաստատել Զառիթափի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2019թ.-ի մարտի 1-ից:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Ասլանյան Սմբատ
2. Բաբայան Արգիշտի

3. Գևորգյան Գևորգ
4. Գրիգորյան Գարիկ
5. Սաղաթելյան Վիրաբ
6. Վարդանյան Սասուն

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

Հավելված

Զառիթափ համայնքի ավագանու

2019թ. փետրվարի 22-ի N 21-Ն որոշման

ԶԱՌԻԹԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Աշխատավարձը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 250000 | 250000 |
| 2 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 120000 | 120000 |
| 3 | Բնակավայրի վարչական ղեկավար | 8 | 200000 | 1600000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 10 | 570000 | 1970000 |
| | ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | | | |
| 4 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 280800 | 280800 |
| 5 | Գլխավոր մասնագետ- ֆինանսիստ | 1 | 280500 | 280500 |
| 6 | Առաջատար մասնագետ | 1 | 215000 | 215000 |
| 7 | Առաջատար մասնագետ | 1 | 215000 | 215000 |
| 8 | Առաջատար մասնագետ | 1 | 215000 | 215000 |
| 9 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 150000 | 150000 |
| 10 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 150000 | 150000 |
| 11 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 150000 | 150000 |
| 12 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 150000 | 150000 |
| 14 | 2-րդ կարգի մասնագետ | 1 | 120000 | 120000 |
| 13 | 2-րդ կարգի մասնագետ | 1 | 120000 | 120000 |
| 15 | 2-րդ կարգի մասնագետ | 1 | 120000 | 120000 |
| 16 | 2-րդ կարգի մասնագետ | 1 | 120000 | 120000 |
| 17 | 2-րդ կարգի մասնագետ | 1 | 120000 | 120000 |
| 18 | 2-րդ կարգի մասնագետ | 1 | 120000 | 120000 |
| 19 | 2-րդ կարգի մասնագետ | 1 | 120000 | 120000 |
| 20 | 2-րդ կարգի մասնագետ | 1 | 120000 | 120000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 17 | 2766300 | 2766300 |
| | ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | |
| 21 | Անասնաբույժ | 7 | 85000 | 595000 |
| 22 | Բանվոր-ջրակարգավորող | 9 | 85000 | 765000 |
| 23 | Մշակույթի ոլորտի կազմակերպիչ | 6,75 | 85000 | 573750 |
| 24 | Մշակույթի ոլորտի աշխատակից | 1 | 85000 | 85000 |
| 25 | Վարպետ | 1 | 85000 | 85000 |
| 26 | Հավաքարար | 2 | 85000 | 170000 |
| 27 | Վարորդ | 1 | 100000 | 100000 |
| 28 | Օժանդակ բանվոր | 4,5 | 85000 | 382500 |
| 29 | Մարզական միջոցառումների կազմակերպիչ | 1 | 135000 | 135000 |
| 30 | Ծրագրերի համակարգող | 1 | 200000 | 200000 |
| 31 | Գործավար | 1 | 100000 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 35,25 | 1130000 | 3191250 |
| | ԸՆԴՀԱՆՈՒՐԸ | 62,25 | 4466300 | 7927550 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԲԱՅԱՆ

Կ. Տ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն. Զառիթափ, (0282) 91507, zaritap.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 22

### ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության ''Հողային օրենսգրքի'' 67-րդ հոդվածի դրույթներով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 27.11.1998թվականի թիվ 756 որոշմամբ հաստատված կարգով

ավագանին որոշում է

Տալ համաձայնություն

Զառիթափ համայնքի Զառիթափ բնակավայրից 1 լոտ ծածկագիր՝ 10-022-0218-ից 0,78250 հա արոտավայրը ներկայացնել աճուրդով վաճառքի:
Աճուրդի համար մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 50%-ը, քայլը՝ 10%-ը:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Ասլանյան Սմբատ
2. Բաբայան Արգիշտի

3. Գևորգյան Գևորգ
4. Գրիգորյան Գարիկ
5. Սաղաթելյան Վիրաբ
6. Վարդանյան Սասուն

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**